



ԽԱՂԱՐԱՌԵՐԹ

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝ ԵՍ, ԳՈՒՆ, ԱՆ, ՄԵՆԵ, ԳՈՒԲ, ԱՆՈՒԲ,

ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ՝ Դ, ՊՈՅՍՏՅԱՆ, ԿԵԿՕ, ԹՕԿՕ

(Փոփոխելի)

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Նա եմ «Շադիկ» եւ ինձ գտա «Շադիկ» չափի նախնայ։
 Իմ անունն պարագայ տեղ զարուհակ բերանսից պիտ առնէի։
 Իմ փառսն կանխիկ պիտ զրկէի։
 Ամէն մարդ պէտք է յարգէ եւ զլիւսն վրայ նստցնէ զիս։
 Ո՛չ ոք պիտ է աչքը ճեղք իմ փառայիս, քո՛ղ աչք ունեցողին առքը
 ելլայ։
 Պէտք չէ իմ փառսն ձեռ կոկորդը անցընէի։
 Պէտք չէ նեղանալ, երբ ձեռ զրկած յողումնները չսպառնի։
 Պէտք է ձայն անգամ չհանէի եւ զլիւսն վրայ դնէի, երբ ձեռ
 դեմ գրուի այս սինակներուն մեջ։
 Նրբ զանա քաղաքում, պէտք չէ մեղանկէի։
 Նա երբ մեղանկելու մօտ ըլլաւ, պէտք է... քաղաք իմէի։

Տնօրէն Ռ. Սաղաեան Ամեն տեսակ գրութիւն պետք է ուղղուի Տնօրէնութեան

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրգուրու խան թիւ 7

ՇԱՀԱԹ 4 ԱՊՐԻԼ 1909

زاغيك غزتمسى درعليه غلطه قورشونلى خاندە نومرو

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կայսրութեանս միլիոնաւոր ընթերցող հպատակները անցեալ օր մեծ միթինկ մը գումարելով Օգ Մէյտա-նի, հետեւեալ որոշումը քուէարկած են։ Նկատելով որ. ԹՕԿՕ - ԿԻԿՕԵԱՆ գումարէն տեսակ մը բռնապետութիւն դարձած Գուրգուրու խանի կայսրութեան բարեպաշտութիւնը չարաչար կը գործածէ. և տէրութիւնը օրէ օր դէպի կործանում կը դիմէ. կը պահանջենք որ տապալի այդ քոմիթէն, և պաշտօնակն ըլլան ԹՕԿՕ և ԿԻԿՕ տիկտարութեանը։

Մասնաւոր պատուիրակներով ինքն մը կայսրութեան միջնադուռը դա-րով պաշտօնապէս հաղորդեց այս որոշումը, յայտարարելով միանգամայն որ, եթէ իրենց պահանջումը անյստի մնայ, տիրութեան պատահականութիւններու առջեւ անպատասխանատու կը նկատեն ինքզինքնին։

Փոքր եպարքոսը. իր հետ ունե-նալով կայսրութեանս ցրուիչը, Ա. փոխմարտի, և գրաւորական մարմինը տակաւի մը վրայ երեւցաւ և խոս-տացաւ պատուիրակներուն իրենց պա-հանջը երեսփ. ժողովին ներկայացը-նել։

Կայսրութեանս երեսփ. ժողովը արտասովոր նիստ մը գումարելով նկատի առաւ այդ բողոքը։ Նիստը բաւական յուզումնալից անցաւ։

Պիւլպիւլ Տէրէյի երեսփոխան Մըզըր Պէյ գեղեցիկ բանախօսու-թեամբ մը պաշտպանեց ընթերցող

հասարակութեան բողոքը. և ԹՕԿՕ ԿԻԿՕԵԱՆ քոմիթէին անմիջական պաշտօնակնութիւնը պահանջեց։

Նոյնպէս խօսեցան նաեւ Բանկալ-թիի, Եէնի Չարչըյի, Չոնկուլտաքի և Չօրուսի երեսփոխանները, իւրա-քանչիւրը իր ներկայացուցած հա-մայնքին անթիւ բողոքները թուե-լով մի առ մի։

Միայն Մարգուանի երեսփոխանը ըսքում-եղ էֆ. արտասուալից աչե-րով ուղեց պաշտպանել, կիկօ-թօկօն։ (Որոշք իրեն հետ աղբակտնա-կան կապեր ունին չմոռնանք) Բայց ստատիկ սուլումներու մէջ ստիպուե-ցաւ լուել եւ իր պոչին վրայ նայելով տեղը նստիլ...։

Նախագահը վիճարանութիւնը փակուած հռչակելով պաշտօնակնութեան խնդիրը քուէի դրաւ որ 120ի դէմ 1 ձայնով ընդունուեցաւ որո-տընդոտ ծափերու մէջ։

Նոյնպէս որոշուեցաւ հետեւեալ ղեկայը հեռադրել գիշերանց կայս-րութեանս բոլոր գեապաններուն, կուսակալներուն, Գայմադամներուն եւ գործակալներուն։

«Կայսրութեանս երեսփ. ժողովը արտասովոր նիստ մը գումարելով ընդհանուր պահանջին զոհացում տալու համար ջնջեց ԹՕԿՕ-ԿԻԿՕԵԱՆ քոմիթէն, եւ ՊԱՐԱ(Պ) ԳԼՈՒՍԵՐԵ ԹՕԿՕԵԱՆ ԿԻԿՕԵԱՆ պաշտօնակն ձեռ-ջակեց, որոնք այլեւս կայսրութեանս հետ ո եւ եւ առնչութիւն չունին»։

անոր փորին մէջ, կիկիլի կիկիլի։ Խանութիւնները շտապով կը գոց-ուին ու կը բացուին աղւորիկ ու կլորիկ կուրծքերը օրիորդներու և տիկիներու որոնք դիւանար պա-տուհաններէ վար կը կախուին իրենց առաւօտեան negligեն մէջ։

ԱՍՏՈՒՆԻՍ պոռագող պոռագողի։ Մէկ վարկեանի մէջ հազար հատ բանայեալ դուրս կը պոռթկայ համ-բոյրի համար ստեղծուած յունական mignon բերաններէ։ Յեղափոխա-կաններուն տակը հինգ ու կէս կը

նետէ, մարդիկը տիւսպառայի կը վախնան։

Լրագրապետներուն երեսը կը խնդայ թերթը քննելու յարմար տեսնէ, իսկ գնչուի լաճեր, իլավի ծա-խելու հեռապատկերէն գինովցած են։

Անոնք որ պատիւը չէին ունե-ցած ԾԵԻ ջարդերը տեսնելու, գէթ անոր արտագողը կրելու վայելքը ունեցան այդ օրը։

Կանացի աշխարհի մէջ մանաւանդ պատուհանէ պատուհան, դուռնէ դուռն ձգլտուքը ծայր տուած է։

— Ինչ կայ, ինչ եղբւր է։

— Զիյա՛ւմ սոխի պէս մարդ կը կտրեն կոր կ'ըսեն կոր, Պոլիս արիւ-նը սէլի պէս կ'երթայ կոր եղբր։

Դաւէ գոգոնա նէ օլմիշ, եանկին վար իմիշ։

— Դա նէ եանկին պէոյիւք չէյ։

— Բէօրբիւ երգըմը։

— Դա, եօգ, աչըմը։

— Աչըմամիշ, հարըմիշ, չօք ա-տամ էօլմիշ։

— Վա՛հ, վա՛հ, վա՛հ։

Դիւշ մը աւելի զարգացած դասա-կարգը, սանկ լրագիր մը հեգելով հարդալ կրցողները յաղաքական տեսութիւններ կրակին պարզել։

— Իթթիհատին գործն է նորէն։

— Չէ, այս անգամ անարաններուն մատը կայ գործին մէջ։

— Հապա սօֆթաները։

— Անոնք ալ Շէրիւթը կը պա-հանջեն կոր։

Բայց ինչ էր արդեօք եղածը։

Ինչո՞ւ կ'ինքըր այսքան իրար կանցնին կոր իբր թէ լու մը սարգած ըլլար իրենց պուգն ի վար. ինչո՞ւ խանութիւններ կը գոցուին, ինչո՞ւ փո-ղոցները ամայի են։

Այս հարցումները բնեղով մինչեւ թոգաթիւնս յառաջացայ այդ օրը, ուր Գալաթայ Սէրայ երթալու վախ-ցող բոլոր սալօնի յեղափոխականնե-րը լեցուեցին էին։

Հան իմացայ որ Պոլսոյ կողմը ջարդ սկսած է։

Ինչ մը վար դացի ջարդը՝ ապրա-տամութեան փոխուեցաւ։

Ինչ մըն ալ յառաջացայ ջարդը քանի մը հոգիի վիրաւորուելուն փոխ-ուեցաւ։

Թիւնէլին գլուխը հասած էի ար-

դէն երբ պու՛մ, պու՛մ արձակուած գնդակներուն օդին մէջ ցոյցի համար պարպուիլը իմացայ։

Որքան վար կ'իջնէի այնքան լու-րերը կը նիւարնային։

Կամուրջին գլուխը հասու եղայ իրականութեան իսկ անտասնոց ան-դին անցնելէ ետքը ամէն բան հաս-կըցայ, թէ ժողովուրդը Շէրիւթը կը պահանջէ եղեր բան մը հասկցած չըլլալով ինք ամէն ի վեր տեղի ու-նեցող դէպքերէն և բարենորոգում-ներէն։

Շէրիւթ։

Ինք ամիս յղացանք յղացանք և ահա ճնու մանուկն մեծ, մանուկն ահեղ և արդարադատ։

Գլխիկոր կը վերադառնամ Բե-րա, ուր ժողովուրդը խուճը խուճը կը խորհրդակցի, կը վիճարանի և օթլախճիարար իլավի կը կարդայ։

Նազըմ փաշան մեռեր է։

Ահմէտ Բիւլան փախեր է։

Հիւսէին ճահիտ կնկան հադուստ հադած տուն մը տատայութեան մը-տեր է։

Թանինի խմբագրատունը թալ-լուեր է։

Շէրիւթ փողոցը իր շէրիւթ բողո-քովին կորանցնելով վերանէ դարձեր է։

Ահա օրուան հերոսութիւնները։

Հապա Բիւլանիւ Բէշեանին մատնութիւնները։

Հապա մեծ կղզիի դաւադրու-թիւնը։

Հապա Մանգուսի ամսական-ները։

Անոնք ամէնքը մոռցուեցան, հին պատմութեան կը վերաբերին այդ ժողովը։

ԸՆԴԵՐ ԳՕԳՈՐ

ՔԻՉ ՄԵՆ ԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵԹԷ ԿԸ ՀԱՃԻԲ

Ա՛լ կը բաւէ որքան երգեցինք վա-ռօղը, դնդալը, ուռմը, հերոսները և յեղափոխութիւնը։

Կտորճիկ մը գրականութիւն ու-նէինք, ան ալ մեր փոխադաստու-թեան զոհ գնաց։

ՍԱՐՍԱՓԸ

Չատկի կրեքշարթի օրը, Մարտ 31. պատմական օր, նշանաւոր օր Թուրքիոյ պատմութեան մէջ, որ չեղաւ չեղաւ օր մըն ալ այնչափ նշանաւոր եղաւ որ, նախթը քսողն ալ զղջաց կարծեմ։

Կ'երեւայ թէ մեզի խըզ ու-ղեցին ընել և ա՛նոնք ալ հարիւրա-պատիկ հազարապատիկ սկսան պար, պել օդին մէջ, ասոր գլխուն կամ

Ազգային գրականութիւն այս, կը հասկնամ, պէտք է ժողովուրդի մը համար, մանաւանդ մեզ նման ժողովուրդի մը համար. բայց այդ գագուտը չափազանցութեան տանիլ և մոռնալ ամէն բան խոստովանինք որ այս ալ հայու ծայրայեղութիւն է:

« ԲԱԿԱՎԱՍ ՕԼԱՍՍ ԵՆԵՐԷՅ »
Կ'ըսէ առածը:

Մա ինը ամսուան լրագրական հաւաքածոները բաժնէք հրատարակուած բազմաթիւ հատորները թղթաւորէք, եթէ ամէն էջի մէջ ծըխացող ուղեւորէն, վառօդէն քիթեր նիւզ չիյնայ մեծ բան:

Հին Ռեթիմի օրով գրականութիւնիս շատ ճոխ էր, բազմատմամբ նոր կարծուած այս բէթիմին:

Անցեալները պատահմամբ 1904-5ի ՄԱՍԻՍներու հաւաքածոն ձեռքս անցաւ: Հաւատացէք ճշմարիտ հաճոյք մը եղաւ ինձ զայն ծայրէ ի ծայր կարգաւ:

Ինչ պէսպիսութիւն նիւթերու, սիրուն նորավէպի մը քով, բժշկական ասուլիս մը, ճամբու նօթերու մը առնիթեր Փանոսեանի գեղեցիկ մէկ ֆանթէզիին: Յարութիւնեանի հոգեցունց քերթուածներուն մօտիկը Սիւպիլին զգայնիկ մէկ գրուածքը, Դուրեան եպիսկոպոսի կրօնաշուէ կուռ մէկ քերթուածը:

Ամէնք իրարմէ գեղեցիկ, իրարմէ ազուր հոգիէ թէ գրաքննութեան սեղմ բովէն անցած ըլլան անոնք:

Պիտի չունենանք արգեօք առանց այդ օրերը ունենալու, այդ օրերու գրականութիւնը, երբ մանաւանդ հիմա աւելի լայն է ասպարէզը և առիթը աւելի պատեհ:

Ո՛ր են մեր գրչի մարդերը Պոլսոյ հարազատները, գաւառի կոյս գրիչները:

Արդեօք Պոլսոյ գրականութիւնը կողկաւն, արտասահմանէն հոս խուժողներուն monopoleը եղաւ, Ա՛լ կը բաւէ, պէտք է քիչ քիչ գուրս ելլել այս գրական սեղմ շրջանակէն, ուղեւոր, վառօդի այս պատեհէն:

Ա՛լ կը բաւէ որքան խեղճ Հայ գրականութիւնը կազմաբի պէս հըսկայ պատերու տակ անարեւ անցաւ և ապրեցաւ:

Օր նոր լրագիր, հանդէս նոր, բայց գրականութիւնը, ան միշտ նոյնն է լճացած, և եթէ ոչ մեռած. գէթ հոգեւարք:

Մեղք է գրականութիւնը. և աւելի մեղք է ընթերցող գաւազարդը, որ գրածը տալով լրագիր մը կամ գիրք մը կը գնէ և յետոյ կը զլջայ խաբուած ըլլալը տեսնելով, նման այն ցաւազարին որ փողոցի կնիկն մը աւտաքին չպարէն կը խաբուի և զայն տուն առաջնորդելէ ետքը հասու կրկայ տխուր և ցուրտ իրականութեան:

ՍԻՆԵՄԱ

AFFICHE

(Հետեւողութիւն)

ԱԼՓԻԱՐԻՆ

Վեցիսիմ նըման գեղեցիկ էր վարդ թէպէտ scerբերն ալ չըջանաւարտ, Բայց հրաշք խեղճը չէր գիտէր երբէք Որ երկու հատ մէկ երկու չէ ալ մէկ եւ թէ այդ կընոյ մինչեւ անագին Կը կանգնի սիրոյ շատուածի բազին եւ երբ կարգեցին զինքը օր մըն ալ Դեռ ինք կ'երազէր անբիծ կոյս մընալ Ահա թէ ինչու հարսնիքին գիշեր, Պարպուելու պահուն champagneի շիշեր,

Երբ ըսին «ազնիկ մէկ բարձ ծերանառ Բնաւ իրգէմքը չը դարձաւ կեռաս: Բայց միւսիւ Լեւոն անունն է մանչուն Այնպէս մը գգուեց իրեւ վարդ նաչաուն

Իր սիրուն կինը որ արշալուսին: Վարդ շատ բան գիտէր սէր մեղրաւուն

Եւ առաւօտուն արթնցաւ երբոր, Վարդ տեսաւ դէմքը ինչ պատկեր ազուր

Որ կ'այրէր սաստիկ այդ հնչոյն պահուն

Վերացաւ խեղոյն երազուն խոհուն, Մէյ մալ յառելով աչքերը սիրուն Լեւոնին ջերմոտ, տամուկ չըթնեցուն Հոն գրուած տեսաւ Ստուած ինչ ցնծում,

«Այս գիշեր ազուր կայ վերաբացում: Համբո

ԿՐՕՆԱԿԱՆ

ԴԵՍՔԵՐ

Սեի սե յօնքեր, և ածաւ թարթիչներ, կարծես թէ նկարիչին վերձինը նոր անոնց վրայէն վերցեր է:

Մաղերը ազ պղպիղ, իսկ աչքերը ծովու պէս մակընթացութեան օրէնքին ենթակայ, որովհետեւ արժեթութեան նման վեր վար կ'ելլեն կիջնեն, մանաւանդ ձախ աչքը յաճախ այնքան վար կ'իջնէ որ օրերով չուզեր իր նախկին գիրքը ստանալ:

Տարիքը եօթանասունի մօտ. թէ և ակունքները ասոր հակառակը կ'ապացուցանեն իրենց կրած վերջին հիմնական նորոգութիւնէն ի վեր:

Այնքան շիք, և այնքան ալ ճապուկ ու գիւրարարութեք որ շատերուն ապշութիւն պատճառած է երբ ձմեռ օրեր ձիւնին փութին թառաւ պաշտէն կ'անցնէր մէկ ձեռքը տապկցու ձուկերու դէպ մը հանդերձ սալաթայով, իսկ միւս ձեռքը՝ քղանցքները հանգրիճած ամենէն պճնասէր կնոյ իսկ մատ խոնկել տալու աստիճան galant ձեռով մը:

Նշանաւոր է իր խմբագրապետութեամբ, խալթախով, տեղապահութեամբ և տարին երկու անգամ պալատ մատուցած շնորհաւորական ուղերձներով:

Յրանսական յեղափոխութեան ժամանակ չեմ գիտեր թէ որո՞ւ կրհարցընէն թէ «ինչ ըրիր յեղափոխութեան ժամանակ», «ապրեցայ» կ'ըսէ մարդը:

«Հիմա» «կ'ապրիմ», կ'ըսէ մարդը հանդարտութեամբ:

«Հապա ապագային» կը հարցնեն «պիտի ապրիմ»:

Նոյնը կրնանք պատշաճեցնել այս կղերականին համար, որ ապրեցաւ հին բէթիմի ժամանակ, որ կապրի նորին տակ և որ պիտի ապրի ալ, ասկէ աւելի շիքիմ բէթիմ մը օրով:

Քարոզներուն պէս որուն իւրաքանչիւր բառը գրելով կինը կուրծքերին կը պահեն իրեւ. ՀՄԱ. Յեկ իր քաղաքականութիւնն ալ երբուն կալուած մըն է իրեն համար անա թէ ինչու երբ պատուհանէն շուկ մը կը լսէ իսկոյն «Ի՞նչ Ա՛յ՛» կը գոչէ, և մինչեւ որ զայն դէմքը չանցնէ սիրտը չի հանգստանար, բայց հոգիէ թէ դիմակը երբեմն ԵԱՆ գրուած ըլլալով քովէն իսկութիւնը երեւայ:

Իր սիրական զբաղումներն են քարոզ տալ, մանաւանդ կիններուն, որոնց հասկնալի ըլլալու գիւտը ըրած է, իսկ շատ կը սիրէ ուսելու աւելի կերցնել, մանաւանդ երբ այս վերջինը չոգուա ըլլայ milka կամ suchard տեսակէն:

ՔԼԻՇԷ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օր մը ողնին անձրեւի քոնուելով՝ կուգայ աղուէսին որջը և կը խնդրէ որ հաճի իրեն փոքր տեղ մը ցոյց տալ իբր ապաստան, մինչեւ որ անձրեւը դադրի:

Աղուէսը բարեսրտութեամբ իր քովը տեղ մը ցոյց կուտայ:

Ողնին մէյ մը տեղաւորուելուն պէս կ'սկսի ուռիլ և իր փուշերով խեղճ աղուէսը նեղել:

Քանի այս վերջինը կը կծկուի չը խայթուելու համար, այնքան ողնին կը տեղաւորուի լայնօրէն:

Աղուէսը ճարահատ, «եղբայր կ'ըսէ, ա՛լ տեղ չկայ որ կծկուիմ, կեցիր ես ելլեմ դուն ինչպէս կուգես նէ անանկ նստէ:»

Թուրքիա բարեխախտարար աղուէսէն աւելի վարպետ փրթաւ իր տեղը բողբոլին ողնի իրախախտ չձգելով:

ՄԷՏՏԱՆ ԴԻՌԱՆԱԿԻՏ



ՊՈՒՆՎԱՌԻ

ԽՕՍՔԵՐ

— Բարեւ Ընկեր Յակոբ: Սըստ, ընկեր մի ըսեր, ես ընկեր չեմ, գլուխս պէլայի պիտի խօթեմ:

— Խեղ է ինչ կայ:

— Ինչ պիտի ըլլայ հովը փոխուեցաւ, փոթորիկը մօտալուտ է, կայծակէն կը վախնամ:

— Շանթարդել չունիմ, ինչ կը վախնաս կոր:

— ՇԱՆԹԷՆ կայ բայց...:

— ԱՐԴԵՆԷՆ ալ ետեւէն կուգայ հոգ մընէր դուն:

Երկու բարեկամներ իրարու կը հանդիպին ճամբան, երկուքն ալ գլխարկաւոր:

— Բարեկամ Ֆելս մը գնելու միտք ունիմ, ուրկէ՞ առնեմ արդեօք:

— Շիտակը ես ալ միտք ունիմ, բայց կարելի եղածին չափ շուտ առնելու է, լոյ՛նկտեւ կրնայ ըլլալ որ վաղը միւս օր stockը հատնի, իմացածիս նայելով մեծ խնդրանք կայ եղեր:

— Բարեւ օրիորդ ո՛ւր ասանկ:

Աշխատանքի տան ժողովի երթալու միտք ունիմ բայց կը մըտածեմ կոր:

— Շիտակը ես ալ անանկ, ժողովըդային գիշերային դասընթացքի դումարովին պիտի երթայի, բայց կը վախնամ կոր. ատենները աղէկ չէ կ'ըսեն կոր:

— Իբրեւ, մենք ալ խեղճի նման ծով նետուելու պէս ազգային դործերու մէջ ինկանք, հիմա ալ անանկ մտառուք կ'առնէ մեզի:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՇԷՐԻՖ ՓՈՂՈՅԻ ՓՈԽԱՆՈՐԴԱՐԱՆԻ

Օսմանեան Գոթիթէ, մականունանաւուն իրրիմատ վէ քերպագը. միջահասակ. կանանչ աչուի. գոյնը ամէն գոյնի զարնող, քիթը սրածայր, բերանը՝ բաւական լայն, ակունքները սուր, ակունքները բամբակ թխմուած, գէր փոր, տարիքը տասնը հինգ, մէկ ոտքը կազ. բնիկ Սեւանիկցի, եւրոպական կրթութիւն ստացած թէւեւ, բայց վրայէն յայտնի չէ:

Այս ազգայինը չորս օրէ ի վեր անյայտացած է լքելով Ենիի Չարշայի, Թիմօնի եւ Տէրվի փողոցի իր բոլոր սիրուհիները, լեւ անագին պարաք մը ձգելով Թոգթալեանի և Բերա Բալասի ի հաշիւ, անհաշիւ ճաշերու:

Կը խնդրուի ազգայիններէն որ յիշեալին եթէ ողջ կամ մեռած եւ կամ ուր գտնուելը գիտեն հաճին անմիջապէս մեզ հաղորդել...:

Կոստան Կիմի

ԿՍՄԻԹՆԵՐ

Կամբոջե, բայց նայե որ
մասնեդ ոսկորի չգամ:

Երեքշաբթի օրը երեսփոխանական ժողով չէ գումարներ անգամ-ներու բացակայութեան պատճառով, ոչ մէկ հայ անդամ գացէր է ժողովի: Իրաւ է. որովհետեւ հայ երեսփոխանները Պոստա պետիկ պիր կրն տիր ըսելով անձնական գործերով զբաղած էին:

Այսպէս, այդ օրը Տօք. Տաղաւարեան տունը հիւանդ կընդունէր, Վարդգէս, ըստ իր բարի սովորութեան, երկու թեր մէկէկ դերասանուհի պատյոյի ելած էր, Հալաճեան Թօգաթիւհանը ապաստանած էր. Գեղամ՝ մայրիկային չըմանակ մը կողմած չուրճ. փողոցին մէջտեղը մինչև Գալաթա մէրայ երթալու վախցող սալոնի յեղափոխականներու նոր նոր հավատարմներ կու տար. իսկ Ջօհրայ՝ ուրախութենէն այնքան պիրա խմեր էր որ ստիպուեր էր չուտ մը տուն վազել:

*** Խօսակցութիւն մը՝ ոստիկանի մը և օտարականի մը միջև. —Ներողութիւն պարոն ոստիկան, շատ կը նեղուիմ կոր. հոս հասարակաց ճեմիչները ո՞ւր կը գտնուին արդեօք:

—Հոս անանկ բան չկայ. —Ի՞նչ բնեմ ուրեմն, տեղս ընեմ: —Ձէ ճանք. ասանկ քովընտի փողոց մը մտիւ. թող տուր երթայ: Եւ բնէ թէ մենք օրէ օր քաղաքակրթուելու վրայ ենք և մայրաքաղաքին ալ կը բարեկարգուի! ?:

*** Ձինուորական շարժումին օրը, դաշնակցութեան office-ը վաղեցինք հրահանգ ստանալու համար: Հեռուէն բաց պատահաններու առջեւ սեւ զանգուածներ տեսնելով կարծեցինք որ թնդածօթներ դերին են, բայց երբ մօտեցանք այդ թընդանօթ կարծուած զանգուածները տիկիներու և օրիորդներու փոխուած տեսանք, որոնք բարձր տեղեր ելեր էին օդ տնելու համար:

*** Կը հերքուի այն լուրը թէ պոլսոյ քաղաքապահ զինուորները իրենց սպաները բանտարկելով և զօրանցները լքելով Այա Սօֆիայի հրապարակը խուժած խռովութիւն հանած և Շէրիւթի գործադրութիւնը պահանջած են:

*** Ռօտտոթոյի երեսփոխան Յակոբ Պապիկեան, Գրիգոր Ջօհրային ըրտէնկոթին փակած տէնդէ բռնուեր է:

—Իսկ Սպարթալին խօսքը չկայ, կ'երեւի քանի մը օրուան համար օգտփոխութեան դացած է իդմիր:

*** Քեամիլ փաշայի պղտիկ տղան, մեր միջոցաւ կը խնդրէ Թաւլա Պալիարնակ օր. Ջապէլէն իրեն վերադարձնել իր փողկապի աղամանդակուտ ասեղը զոր սար-

սափի առտուն տունէն փախած ատենը հոն ձգած է եղեր:

*** Ենովք Արմէն պաշտօնապէս կը հերքէ թերթերու այն լուրը թէ ինք «ՀԱՅԱՍՏԱՆ» անուն թերթ մը պիտի հանէ:

«Չրպարտութիւն է կը գոչէ տղան զայրացած, ինծի պէս անմեղի մը վրայ աստանկ գայթակղեցուցիչ զբոյցներ հանելը»:

*** Աղգանուէր հայուհեաց ընկերութեան ի նպաստ Բերայի վեց նաղելաչուք օրիորդներուն ՄԱԳՆԻՍ ներկայացումը, որ տեղի պիտի ունենար վաղը, յետաձգուած է երկու շաբաթի չափ:

*** Կիմանանք որ ջոջ թաղի մը թաղ. խորհուրդը վարժարաններու տնօրէնութիւնը պիտի յանձնէ եղեր տիար Մինաս Չերաղի:

Կը յուսանք որ այս անգամ դպրոցները քիչ մը կարգ կանոնի երես տեսնեն, և տղաք խայտառակաբար փողոցները ժուռ չեն գար:

*** Ատանայի մէջ սկսեր են Հայերը ջարդել, ինչպէս կ'ըսէ հեռագիր մը:

Ուրախ ենք որ գոնէ այս անգամ ներքին գործոց նախարարութիւնը կը ստիպուի հաստատել մերկապարանոց իրականութիւնը:

Եթէ նորոգ հանգուցեալ Շուրայի իւմմէր եւ Թաւրիս ողջ ըլլային, անշուշտ այս հեռագիրն ալ կարկառաւ կ'ընէին անտարբերութեամբ:

*** Անգլիական երկու զրահաւորներ Մալթայէն ճամբայ ելեր են իրենց կարասիի ձիւն ցուկը ցոյց տալու համար, ինչպէս կը հաղորդեն թերթերը վերապահութեամբ:

Ասարք քեֆֆիզ եւ Համիտիէ տեղական զրահաւորները— յիշեալ հիւրերուն բարի եկար մաղթելու համար անշուշտ— դէպի Մարմարա բացուեր են:

*** Կայսերական բարձր հրաման մը վերստին իրենց փարսիք դաւնալ հրամայէր է իր սիրական հօտին, որ նախորդ պատերազմական նախարարին օրով ալուր փոխադրուած էր օգտփոխութեան համար:

*** Վերապահութեամբ կը լըսենք թէ Ակնունի, Վարդգէս, Կոմս և Վահագն իրենց 300ի մօտ ընկերներով, իրենց յօդացուը բուժելու համար ամառը Երս.յէ. պէն պիտի անցնեն, ուրկէ ժընէվի ճամբով աշխարհ մօտ մեմլիքերին պիտի քաշուին հանգստանալու համար:

*** Կայսերական բարեհաճ իրաւունք մը հրամայեց Եւրոպա խրկուելիք հեռագիրներու մասին զբոլուած արգելքը բառնալ, քաշուած հեռագիրները գրաքննութենէ անցնել յետոյ:

Այս լուրին մեծ կարեւորութիւն կը տրուի Եւրոպայէն Սարքիէն շրջանակներուն մէջ:

*** Բերայէն հայ-լալի տիկին մը, միջահասակ գեղին մազերով, և

աջ աջոյն վրայ սիրուն պէնկով, Պօն մարչէէն մինչեւ Թօգաթիւհան ճամբուն վրայ դժբաղդութիւնը ունեցեր է կորսնցնելու իր portecarteg.

Գանդին մեծ պարգեւ խոստացուած է պայմանաւ որ յիշեալին ամուսնոյն յանձնելու աւանակութիւնը չունենայ:

*** Կը զգուշացնենք այն 6 չիք պարոնները, որոնք Մեռելոցին օրը, իրենց եղբոր ընկերակցութեամբ գերեզմանատունէն տուն վերադարձող երկու սիրուն օրիորդները կը հետապնդէին խանութէ խանութ և փողոցէ փողոց:

Որովհետեւ յիշեալ խոռիկի կործուածներուն հայրը ոչ թէ ճնճղուկ, այլ խոշոր անդղ մըն է...

*** «Նոր հոսանք» հոսանքէն քշուելով չգիտցուի որ խրեւ է: Կ'երեւայ որ փոթորիկի ժամանակ կայծակը զարնելով շանթահար եղեր է խեղճը:

*** Միջրդատ Հայկազն յուզումէն հիւանդացեր եւ անկողին ընկեր է: Տեսնողներ այնքան փոխուած գտեր են զինքը, որ եթէ անան ու մականունը փոխէ զինքը ճանչնալ անկարելի ըլլալը կը յայտարարեն:

*** Նորին կայս. վեհափառութիւնը պատասխանելով Բուժէլիի զօրարանակէն եկած հեռագրի մը, հաւաստեւ է որ սահմանադրութիւնը վտանգի մէջ չէ, թէ ինք երբէք զայն չպիտի ջնջէ եթէ նոյն իսկ ժողովուրդը զատ զատ գայ զայն իրմէ խնդրելու:

Այս լուրը անհուն հրճուածքով լեցուց նորին վեհափառութեան միլիոնաւոր հպատակներուն սիրտը, որոնք անգամ մը ևս շնորհակալութեան արցունքներ կը թափեն այս հայրական ծայրայեղ գութին առջև:

*** Նեմիլ մեյիսմէն աղատ թողութեւ է, խոհարար Նչանի անդրանիկ տղուն հարսնիքին կնքահայրութիւնը ստանձնելու համար:

Միջրդատ Հայկազն հիւանդ ըլլալով՝ իր կողմէ Թագաթիւհանի կարօտներէն մէկը խրկած է յարգանքները մատուցանելու համար նորին վսեմութեան:

Կը զարմանանք, ... որ օրէնքին տրամադրութեան համաձայն աղատ թողուեցաւ նորին վսեմութիւնը:

*** Ոստիկանութեան նախարարը հրաժարականը տուեր է:

Վերջապէս չգիմացաւ մարդը. քամին փչելուն Սամին տախտակորմի պէս տեղի գուռաւ:

*** Ծովային նախարար Էմին փաշա երբ իր պաշտօնատունը գնաց, նուազները «աս մեր ուզածը չէ» ըսելով վեց գիրը զրին մարդուն. որուն վրայ ստիպուեցաւ նախարարը իր հրաժարականը տալ առ ի չգոյէ լաւագոյնի:

*** Մանասթրէն առնուած լուրերը բաւական վրդովիչ են, հակառակ Ներքին Գործող նախարարին զրկած հանդարտեցուցիչ տեղերուն: Ձինուոր և ժողովուրդ պատրաստ-

տուեր են Պոլսոյ վրայ քաշել եթէ Ահմէտ Բիգա չնախագահէ Երեսփ. ժողովոյ:

*** Ասարը Թովֆիք մարտանաւին սպաններէն մէկը երկուրդի պալատը կրակել հրամայած ըլլալով անմիջապէս բռնեցին զինքը զինուորներ և իր փորած հորը նետեցին զինքը երկուրդի հովանաւոր ծառերէն կախելով:

Շէրիւթին առաջին պտուղը ահաւարկ:

*** Մեծ Կղզիի բանտարկեալները Պոլսէն ստացուած գոհացուցիչ լուրերուն վրայ նաւատոյց իչեր և հող օդիարանութեամբ աղուոր մը գուարճացեր են մինչեւ իրիկուն:

*** Անգլիական նաւատորմի Տարտանել հասած է ձուկ որսալու համար, իսկ ռուսականը Գալաթի առջեւ պլաւըրձին կը զարնէ կոր:

Հապա մեր նաւատորմը, անոր ալ մէկ մասը Տարտանել գացած է, մէկ մասը անշուշտ Գաւաք պիտի երթայ իսկ մնացածը Թէրսանէն կը սպասէ կողմ և շաւրասա:

Չելլեն նաւատորմերը մեր ջուրերուն մէջ քատրիլ խաղալ սկսին:

*** Պուլկարներու եւ Թուրքերու միջեւ Ռահովցի գիւղին մէջ արիւնշալի կռիւ մը տեղի ունեցեր է որու միջոցին 5 թուրք և 2 Պուլկար մեռեր իսկ 5 10 հօգի ալ վիրաւոր են:

Նոր քաշել սկսող մանկան առաջին տատխաներն են արդեօք:

*** Նորին կայսերական վեհափառութիւնը իր առատ գթասրբութեան նոր մէկ ապացոյցն ալ կուտայ հօճաներու 10 հազար ոսկի նուիրելով:

Չեմ գիտէր թէ ինչու թուրք թերթեր չարամտութիւն կ'անուանեն ասանկ լարեգործական լուր մը:

ՍԱԿԱՐԱՆ

ՊՈԼՍՈՅ ԽԱՆՈՒԹԵՆՐՈՒՆ

Մարտ 31 — Ապրիլ 3

Երկուշաբթի.

Առտուն բացուեցան «պիտիլլան»-ով:

Յորեկին գոցուեցան «մահլէր»-ով:

Կէս ժամ ետքը բացուեցան «բան ջըկայ»-ով:

Ժամ մը ետքը գոցուեցան «սարսափ»-ով:

Չորեքշաբթի.

Հրապարակը անկայուն է:

Հինգշաբթի.

Սոյն վիճակը կը շարունակէ, եթէ քանի մը օր ալ տեւէ բոլոր խանութներուն բեղկերը երկտարական թելերով պրտի կապուին որ սեղուած ատենը բացուին գոցուին:

Ուրբաթ.

Ինչ մը հանդարտութիւն, թէ եւ երբեմն սանկ քանի մը խառնաւոր մարմուք զգալով իրարու վրայ իյնան:

Մեծ քանակութեամբ քեաֆիլի իւղ սպասարեցաւ, խեղճ համաներուն թելերը չփելու համար:

ԱՐՏՕՆԱՅԻՐ Ա. ՍԱԿԱՆԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. ՍԱԿԱՆԱ

«ԾԱՂԻԿ» ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլսոյ	համար տարեկան	45	դրուշ.
»	» վեցամսեայ	25	»
Գաւառի	» տարեկան	60	»
»	» վեցամսեայ	35	»
Արտասահմանի	»	13	ֆր.
»	»	8	»

Ոչ ոք զօրով բաժանող կ'ստանազրուի:
Դրամը կ'ունի չորհրդներ եւ մեք փառան ուսողներ կ'անիծենք եւ... կը խայտառակենք:

La Grande Fabrique



1908Ի ԶՄՐԱՆ ԵՒ ԱՇՆԱՆ

ՆՈՐՈՅԹՆԵՐԸ

Փ Ն Տ Ո Ե Ց Ե Ք

Շ Թ Ա Յ Ն

ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ

ՊՈԼԻՍ ԵՒ ՂԱԼԱԹԻԱ



ՎԱՅԵԼՉԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ ԿՈՒՉԵՆ ՊԱՀՊՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԻ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃԵՄԱՐԻՑ

ԳՐԷՄ ՄԻՄՈՆԸ

ԿԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՀՆԱՐՈՒԱԾ 1860

Ա Մ Ե Ն Ա Շ Ի Ն

ԳՆԱՅՑԿԱՅՆՈՎ ԲԵՐԵՍԸ

ԿԸ ԳՏՆՈՒԻ —

ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԴՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ուշադրութիւն Ընել —

— ՎԱՃԱՌԱՅԻՇԻՆ ԵՒ ՄԵՐԺԵՂ —

ԿԵՂԾ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆԶՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ԳՐԷՄ ՄԻՄՈՆ

ՍՈՒԱՆՑ ՊԻՍՏՈՒԹԻ

ԲԱՅԱՐՉԱԿԱՊԷՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՋ

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ: Բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենայլ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցաւ: Յէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղառակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

Հայրայրից ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Co

մեքենան լաւագոյնն է. այն մեքենան ամէնէն աւելի կատարելազործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բոլրակալ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինգերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինգերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինգեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

- | | | |
|--------|---|---|
| ԲԵՐԱ | { | 1. Մեծ փողոց, Պօն Մառշի գէտ, Թ. 343 եւ 343 կրկին |
| ԿԱԼԱԹԱ | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի չիսէին գէտ. |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սինգեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամիլէյին կայարանին գէտ. |
| ՍԿԻՍԱՐ | { | 1. Սուլթան Համամ, Թ. 2 |
| | | 2. Սուլթան Պալատ, Թրամիլէյին կայարանին գէտ, Թ. 2արշը Պօյու, Թ. 120. |

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ Եւաքիաւորութիւն:

Մասաճիւնդեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ: Սինգերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա Մեծ Փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզուրի տունը:



MAYER-MANN

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

ՀԱՆԴԵՐՁԵԼՆԵՐՈՒ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒ

ԶՄԵՌՆԱՅԻՆ ԶԳԵՍՏՆԵՐ

ԿԻՆԵՐՈՒ, ԱՅՐԵՐՈՒ ԵՒ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԱԺԱՆ ԵՒ ԳԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ

ԳԻՄԵՅԼԻ ԵՒ ԳՈՋ ՊԵՏԻ ՄԱՐԲ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՐՈՐ ՇԻՇԵՐ

(Verres pharmaceutique)

Դեղարաններու եւ դեղորէից վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչեւ հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիրար Միկրոյի Պօղոսօֆ (Այրր էֆէնտի խան, Թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին եւ ունի ճոխ ու այլ լազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու եւ կարող է մրցիլ ամէն կերպով: Վստահ եւ ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները եւ ճոցիւքները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ եւ այս ճիւղին մէջ մէկ հաստիկ առեւտրական տունէն, քաջաբերելու համար Հայ ձեռնարկուն որ միւնոյն ատեն աժանութիւնը քնաբան ընտրած է իրեն:

Ի Ա Ս Ն Ա Կ Է Տ Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՏՈՒԹՈՒ Մ. ԱՅՍՆԵԱՆ

Վկայեալ Բարիզի համալսարանէն, եւ անձնական ատամնաբոյժ երջանկայիշատակ Մուղաֆէրէտին Շահին:

Բերա Մեծ Փողոց, ուսական դեպքանատան դիմաց Սիթէ տը Սիբի, ուր կը դարձանէ ամէն տեսակ ակուայի, լինտի եւ բերնի հիւանդութիւններ վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ակուաներ սան քրօշէ է սան բլաք տասը տարի ապահովութեամբ:

Սոյն դարձանները կը կատարուին Գաղղիական եւ Ամերիկեան ամենալաւին հնարուած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործողութիւնները պիտի ընդունին, առանց ցաւի եւ առանց քնացուելու: Դարձանատունը Բարիզեան մասնագիտական վերջին սխալէմով, իր տեսակին մէջ եղական է: Այցելեցէ՛ք եւ դատեցէ՛ք: